«Թել-Սել» ԲԲԸ-ն հայտարարում է ծառայությունների ձեռքբերման մրցույթ

«Թել-Սել» ԲԲԸ-ն «Ծանուցումների ուղարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարում է մրցույթ։

Ծանուցումների ուղարկման ծառայություններին ներկայացվող տեխնիկական պահանջները մանրամասն ներկայացված են կից փաստաթղթում։

Մրցույթի մասնակցության հայտում պետք է ներառված լինեն ծառայությունների մատուցման համար պահանջվող առկա տեխնիկական հնարավորությունները, սպասարկման աջակցման մոդելը, ինչպես ներկայացված է տեխնիկական պահանջներում, ինչպես նաև ծառայությունների մատուցման սակագները՝ ներառյալ բոլոր հարկերը։

Մրցույթի մասնակցության հայտի ներկայացման պայմաններն են՝

Հայտերը ներկայացվում են փակ ծրարով, որը պետք է կնքված լինի մասնակցի կողմից և պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝ պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն), «չբացել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը» բառերը, մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը։

Հայտերը ներկայացվում են ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3 հասցեով։

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվում 27.12.2024, ժամը 18:00

Վերջնաժամկետից հետո ներկայացված առաջարկները չեն դիտարկվի։